ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
ՍՑ-59/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.08.2016թ. թիվ 1/73-1/19822-16 և 16.08.2016թ. թիվ 1/73-1/20406-16 գրություններով համապատասխանաբար ներկայացված «Պրոֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01204945) և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01222567) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-59/16 բողոք), ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Պրոֆարմ» ՍՊԸ-ի 27.06.2016թ. գրությունը, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 20.06.2016թ. թիվ 01/20 գրությունը պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրության հիման վրա, 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն) խնդրելով ուսումնասիրել «Պրոֆարմ» ՍՊԸ-ին և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝

Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 21.07.2016թ. թիվ 01/04.1/2803-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է «Պրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ, Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից ***մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (15.12.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում «Պրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում վերջինս կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կենտրոնը 21.07.2016թ. թիվ 01/04.1/2802-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով արձանագրել է, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու բավարար հիմքեր առկա չեն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.08.2016թ. թիվ 1/73-1/19822-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ուղարկել «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 02.08.2016թ. թիվ 08-241 գրությունը, ըստ որի՝ վերջինիս կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***03.06.2016թ.*** հայտ է ներկայացրել «Պրոֆարմ» ՍՊԸ-ն:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.08.2016թ. թիվ 1/73-1/19822-16 և 16.08.2016թ. թիվ 1/73-1/20406-16 գրություններով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 124-րդ կետի 2-րդ ենթակետը, պահանջել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ «Պրոֆարմ» ՍՊԸ-ին և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

2. «Պրոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 03.06.2016թ. թիվ 01/04.2/2178-16 գրությամբ դիմել է «Պրոֆարմ» ՍՊԸ-ին (Ընկերություն 1):

Ընկերություն 1-ը 27.06.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

«Պրոֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցության հայտով ներկայացրած հավելված N 3.3 ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» կետով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ըստ Ընկերության՝ 2013թ., 2014թ. և 2015թ. առ դեկտեմբերի 15-ը վերջինիս համախառն եկամուտը կազմել է 40 572 554 ՀՀ դրամ, սակայն հետագայում է հասկացել, որ հաշվետու տարի ասելով՝ պետք է հասկանալ տվյալ ժամանակաշրջանին նախորդող տարին: Հետևաբար նման հաշվարկի դեպքում «Պրոֆարմ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի գումարը կազմում է 3 750 000 ՀՀ դրամ, որի դեպքում Ընթացակարգի 32-րդ և 70-րդ չափաբաժինների համար հայտով ներկայացրած գնային առաջարկը գերազանցել է համախառն եկամուտը:

Ըստ «Պրոֆարմ» ՍՊԸ-ի՝ վերջինիս կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն չի խախտվել:

3. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 03.06.2016թ. թիվ 01/04.2/2171-16 գրությամբ դիմել է «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին (Ընկերություն 2):

Ընկերություն 2-ը 20.06.2016թ. թիվ 01/20 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված հավելված N 4.1 տեխնիկական բնութագրերի համապատասխանության հավաստմանը զուգահեռ ծանուցմամբ և համապատասխան հղումով (գնային առաջարկում) հստակ նշվել է յուրաքանչյուր չափաբաժնի համար առաջարկվող դեղերի պիտանելիության ժամկետները, հետևաբար Ընկերություն 2-ը չէր կարող մատակարարման ենթակա դեղերի պիտանելիության ժամկետների վերաբերյալ սխալ հավաստում տալ: Միաժամանակ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն նշել է, որ մասնակցության հայտ չի ներկայացրել Ընթացակարգի 12-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով, սակայն Պատվիրատուի կողմից ներկայացվել է Ընկերությանը նշված չափաբաժնի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջ:

4. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/2» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

5. ՍՑ-ԳԲԽ-59/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ ֆինանսների նախարարության 05.08.2016թ. թիվ 1/73-1/19822-16 գրությամբ ներկայացված «Պրոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի թվով 9 չափաբաժիններին մասնակցելու նպատակով *15.12.2015թ.* հայտ է ներկայացրել «Պրոֆարմ» ՍՊԸ-ն:
- Ընկերություն 1-ը հայտի N 3.3 հավելվածի՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «ա» կետով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***
- «Պրոֆարմ» ՍՊԸ-ն հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ թվով 9 չափաբաժինների համար, մասնավորապես, 20-րդ չափաբաժնի համար՝ 72 000 ՀՀ դրամ, 24-րդ չափաբաժնի համար՝ 1 700 000 ՀՀ դրամ, 27-րդ չափաբաժնի համար՝ 186 000 ՀՀ դրամ, 28-րդ չափաբաժնի համար՝ 1000 000 ՀՀ դրամ, 32-րդ չափաբաժնի համար՝ 5 888 000 ՀՀ դրամ, 37-րդ չափաբաժնի համար՝ 30 000 ՀՀ դրամ, 38-րդ չափաբաժնի համար՝ 280 000 ՀՀ դրամ, 70-րդ չափաբաժնի համար՝ 32 793 600 ՀՀ դրամ, 71-րդ չափաբաժնի համար՝ 980 000 ՀՀ դրամ:
- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 12.01.2016թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Պրոֆարմ» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Պրոֆարմ» ՍՊԸ-ի ***հայտը ներկայացնելուն (15.12.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2012թ., 2013թ., 2014թ.) համախառն եկամուտը կազմել է 3 750 000 ՀՀ դրամ:***

• Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.02.2016թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.3 կետի «բ» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ ՖՆ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, «Պրոֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը որակել է իրականությանը չհամապատասխանող և որոշել է վերջինիս հայտը մերժել:

• Կենտրոնը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.07.2016թ. թիվ 01/04.1/2803-16 գրությամբ արձանագրել է «Պրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը, միևնույն ժամանակ հաշվի առնելով խախտումը թույլ տալու պահից (15.12.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելու վերաբերյալ տեղեկատվության բացակայության հանգամանքը, գտել է, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

• ՀՀ ֆինանսների նախարարությունը 05.08.2016թ. թիվ 1/73-1/19822-16 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին է ներկայացրել «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 02.08.2016թ. թիվ 08-241 գրությունը, համաձայն որի՝ վերջինիս կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***<u>03.06.2016թ.</u>*** հայտ է ներկայացրել «Պրոֆարմ» ՍՊԸ-ն, միաժամանակ պահանջել է նախաձեռնել բողոքարկման գործընթաց՝ «Պրոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

• ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն Կենտրոնին հայտնել է, որ «Պրոֆարմ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ***3 750 000 ՀՀ դրամ:***

2. *ՀՀ ֆինանսների նախարարության 16.08.2016թ. թիվ 1/73-1/20406-16 գրությամբ ներկայացված «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝*

• ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի թվով 42 չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն:

- «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 15.12.2015թ. ներկայացրած հայտի հավելված N 4.1՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ իր կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով առաջարկվող դեղի պիտանելիության ժամկետը համարժեք է հայտի հավելված N 4-ով՝ գնային առաջարկով նախատեսված պիտանելիության ժամկետին (12.2017թ.):
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.01.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով մերժել է՝ հրավերի տեխնիկական բնութագրին և ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-59/16 բողոքը, Խորհուրդը հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: ***Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի

համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի թվով 9 չափաբաժիններին մասնակցելու նպատակով «Պրոֆարմ» ՍՊԸ-ն 15.12.2015թ. ներկայացրած հայտի N 3.3 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից, մինչդեռ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրամադրված եզրակացության՝ Ընկերություն 1-ի ***հայտը ներկայացնելուն (15.12.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2012թ., 2013թ., 2014թ.) համախառն եկամուտը կազմել է 3 750 000 ՀՀ դրամ,*** ինչն էլ պակաս է եղել Ընթացակարգի 32-րդ և 70-րդ չափաբաժինների համար ներկայացված համապատասխանաբար 5 888 000 ՀՀ դրամ և 32 793 600 ՀՀ դրամ գնային առաջարկներից, ինչի արդյունքում Ընկերության հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ «Պրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 15.12.2015թ. հայտի N 3.3 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Պրոֆարմ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և վերջինիս ***վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում վերջինս մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ***, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Խորհուրդն արձանագրում է, որ «Պրոֆարմ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերություն 1-ը «Նորք Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ***03.06.2016թ.*** հայտ է ներկայացրել:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/1»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի թվով 42 չափաբաժիններին մասնակցելու նպատակով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն 15.12.2015թ. ներկայացրած հայտի հավելված N 4.1՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ իր կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով առաջարկվող դեղի պիտանելիության ժամկետը համարժեք է հայտի հավելված N 4-ով՝ գնային առաջարկով նախատեսված պիտանելիության ժամկետին (12.2017թ.):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.01.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 8-րդ չափաբաժնի մասով մերժել է՝ հրավերի տեխնիկական բնութագրին և ՀՀ կառավարության 02.05.2013թ. N 502-Ն որոշման պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ փվյալ:***

Խորհուրդն, ուսումնասիրելով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, պարզել է, որ Ընկերություն 2-ի կողմից հավելված N 4 գնային առաջարկում 8-րդ չափաբաժնի համար նշված է եղել՝ պիտանելության ժամկետ՝ 12.2017թ.:

Այսպիսով, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն 15.12.2015թ. ներկայացրած հայտի հավելված N 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ հայտնել և հավաստել է, որ իր կողմից Ընթացակարգի 8-րդ չափաբաժնով առաջարկվող դեղի պիտանելիության ժամկետը համարժեք է հայտի հավելված N 4-ով՝ գնային առաջարկով նախատեսված պիտանելիության ժամկետին (12.2017թ.):

Հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ նման փաստական հանգամանքների պայմաններում բացակայում է Ընկերություն 2-ի ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը:***

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 16.08.2016թ. թիվ 1/73-1/20406-16 գրությամբ նախաձեռնած «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01222567) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգը մերժել:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 05.08.2016թ. թիվ 1/73-1/19822-16 գրությամբ ներկայացված «Պրոֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01204945) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Մարտիրոսյան Հարություն**